ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՀԱՐՈՍՅԱԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 85 - 86 (16582) ՇԱԲԱԹ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻՆՆ» Է

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, երկրի բոլոր 3 644 ընտրատեղամասերում, քվեաթերթիկների տվյալների ամփոփումից հետո, հրապարակեց հոկտեմբերի 21-ին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերջնական արդյունքները:

Ինչպես արդեն հաղորդել ենք, ընտրությունների արդյունքներով, որոնց մասնակցում էր 22 քաղաքական կուսակցություն, 5 ընտրադաշինք եւ նախաձեռնող խմբի կողմից ներկայացված անկախ թեկնածուներ, ընտրվելու էին ինքնակառավարման հինգ եւ շրջանների 59 քաղաքապետեր ու շրջանային մունիցիպալիտետների սակրեբուլոների 2058 պատգամավորներ:

Ըստ ԿԸՀ տվյալների, երկրի մասշտաբով ընտրացուցակներում ներառված 3 442 445 ընտրողներից տեղական ընտրություններին մասնակցել է 1,6 միլիոնը, այսինքն՝ ընտրողների ցուցակային կազմի 45,64 տոկոսը:

ԹԲԻԼԻՍԻ

Ընտրվելիք 64 քաղաքապետերի շարքում, թերեւս ամենանշանակալին մայրաքաղաքի քաղաքապետի ընտրությունն էր, որի պաշտոնին հավակնում էր 13 թեկնածու: Թբիլիսիի բոլոր 737 ընտրատեղամասերի արդյունքների ամփոփումից հետո, պարզվեց, որ առաջիկա չորս տարիներին մայրաքաղաքի ղեկավարությու-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԲՈԼՈՐԸ ՏԵՍՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՆՈՐ ԸՆՏՐԱՓՈՒԼ ԱՎԵԼԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ Է»

Հոկտեմբերի 27-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագհությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Նիստի մեկնարկում, երկրի վարչապետը, գնահատելով հոկտեմբերի 21-ին անցկացված տեղական ինքնակառավարման ընտրությունները, նշեց. «Համոզված եմ, որ նման մակարդակով ընտրությունների անցկացումն ըստ արժանվույն կգնահատվի մեր գործընկերների կողմից, եւ դա լուրջ ազդակ կհանդիսանա Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման գործընթացում: Նշանակալից է, որ ընտրություններն անցկացվեցին թափանցիկ եւ խաղաղ միջավայրում, եւ միջազգային ու տեղական դիտորդների կողմից գնահատվեցին որպես ազատ եւ ժողովրդավարական»,- հայտարարեց վարչապետը:

Նա շնորհակալություն հայտնեց «Վրացական երազանքի» բոլոր կողմնակիցներին, նաեւ՝ բոլոր նրանց, ովքեր ավանդ ներդրեցին ընտրությունների կազմակերպված անցկացման գործում:

- Կարծում եմ, բոլորը տեսնում են, որ յուրաքանչյուր նոր ընտրափուլ ավելի ու ավելի ժողովրդավարական է ու թափանցիկ է դառնում: Նշանակալից է, որ մեր թիմն անցկացրեց ապագային կողմնորոշված, ծրագրին կողմնորոշված նախընտրական քարոզարշավ եւ, ընդհանրապես, ընտրական գործընթացում շատ ավելի քիչ էր ատելության լեզուն, ինչը նշանակալի է մեր երկրի զարգացման համար,- ընդգծեց վարչապետը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԻՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՎԱՎԵՐԱՑՐԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոկտեմբերի 20-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր ստորագրությամբ վավերացրեց, նախօրեին, երկրի խորհրդարանի կողմից հաստատված Վրաստանի նորացված սահմանադրության նախագիծը:

Ասենք, որ մինչ այդ Գիորգի Մարգվելաշվիլին, օգտվելով վետոյի իր իրավունքից, դիտողություններով հանդերձ, երկրի գլխավոր օրենքի նախագիծը վերադարձրեց խորհրդարան: Նախագահի կողմից ներկայացված դիտողությունները մի փոքր գերազանցեցին կառավարող «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության սպասումները, եւ խորհրդարանը ձայների մեծամասնությամբ մերժեց դրանք ու կրկին հաստատեց երկրի Սահմանադրության արդեն ընդունված նախագիծը:

Նշենք, որ նախագահի կողմից խորհրդարանի կրկնական ընդունած սահմանադրական փոփոխությունների ստորագրումից հրաժարման դեպքում, փաստաթղթի վավերացման իրավունքը վերապահվում է խորհրդարանի նախագահին:

- Ելնելով երկրի արտաքին եւ ներքին մարտահրավերներից, ելնելով նրանից, որ մենք հնարավոր ամեն ինչ անելու ենք ապակայունացման պատճառներից խուսափելու համար, ես, որպես պետության ղեկավար, երկրի գերագույն գլխավոր հրամանատար եւ սահմանադրության երաշխավոր, ստորագրում եմ այս փաստաթուղթը,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին՝ հատուկ հրավիրված ճեպ-ասուլիսում:

Ընդսմին, երկրի նախագահն ընդգծեց, որ իր համար դա բավական դժվար գործ էր: «Վրացական երազանքը» չփոխեց միակուսակցական սահմանադրություն ընդունելու ավանդույթը եւ, խորհրդարանը, ինչպես մինչ այդ, ընդունեց միակուսակցական սահմանադրություն, ուստի ինձ համար դժվար էր ստորագրել սահմանադրական այդ փոփոխությունները»,- ասաց Գիորգի Մարգվելաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԹԵԱ ՇՈՒԼՈՒԿԻԱՆԻՆ ԵՎ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Հոկտեմբերի 20-ին Թբիլիսիում աշխատանքը սկսեց վրաց-հայկական իրավական երկրորդ ֆորումը: Ֆորումի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, Պատիժների կատարման, պրոբացիայի եւ իրավական օգնության հարցերով փոխնախարար Զվիադ Միխանաշվիլին, ինչպես նաեւ աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին փոխնախարարներ Արթուր Հովհաննիսյանը, Սուրեն Քրմոյանը եւ Վիգեն Քոչարյանը:

Վրաց-հայկական ֆորումի ընթացքում քննարկվեցին երկու երկրների դատական բարեփոխումներին, քաղաքացիական եւ քրեական գործերով իրավական համագործակցությանը, երկու նախարարությունների աշխատակազմի Վերահսկողության ծառայությունների իրավասություններին, անչափահասների արդարադատության ոլորտում լավագույն փորձին վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաեւ՝ ներկայացվեցին Հայաստանում քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում ներդրված միասնական էլեկտրոնային համակարգը, հակակոռուպցիոն քաղաքականությունը, Պրոբացիայի ծառայության զարգացմանն ու քրեակատարողական ոլորտի բարեփոխմանն ուղղված աշխատանքները:

Նույն օրը կայացավ երկու երկրների արդարադատության գերատեսչության ղեկավարների հանդիպումը, որի ընթացքում կողմերը քննարկեցին դատահրավա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

Հոկտեմբերի 25-ին, Թբիլիսիում, Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին հանդիպում է ունեցել աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության գեներալ-մայոր Մուշեղ Ղազարյանի գլխավորած պատվիրակության անդամների հետ:

Հանդիպմանը քննարկվել են երկու երկրների արտակարգ իրավիճակների կառավարման համար պատասխանատու կառույցների համագործակցության հետ կապված տարբեր հարցեր:

Հանդիպման արդյունքում, պայմանավորվածություն է ձեռք բերվել մի շարք հարցերի շուրջ:

ՕՐԵՆՍԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՔՔՆՆԱՐԿԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 25-ին Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ տղամարդու եւ կնոջ կենսաթոշակային տարիքի հավասարեցման մասին «Նոր Վրաստանի» նախաձեռնության քննարկմանը:

Նախագիծը դրվել է խորհրդարանի առողջապահության եւ սոցիալական հարցերի կոմիտեում:

Օրենսդրական նախաձեռնությունը նախատեսում է կանանց եւ տղամարդկանց համար կենսաթոշակային տարիքի սահմանման հարցը, այն մատնանշում է 60 տարեկանը: Հիշեցնենք, որ գործող օրենսդրությամբ, կանանց կենսաթոշակային տարիքը կազմում է 60, իսկ տղամարդկանցը՝ 65: «Նոր Վրաստանը» գործող օրենսդրությունը համարում է խտրական, ուստիեւ բողոք է ներկայացրել սահմանադրական դատարանում:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին շնորհավորեց այն կուսակցություններին, քաղաքապետերին եւ սակրեբուլոյի պատգամավորներին, ովքեր հաղթեցին հոկտեմբերի 21-ին անցկացված տեղական ինքնակառավարման ընտրություններում:

Նրա խոսքով, ընտրություններին ժողովրդի վստահությունը նրանք պետք է օգտագործեն այդ իսկ մարդկանց հիմնախնդիրների կարգավորման համար: «Վրաստանում 2017 թվականի տեղական ընտրությունները կայացան: Ընդհանուր առմամբ, ընտրություններն անցան հագիստ միջավայրում, թեպետ եղան թերացումներ, որոնց կարգավորումը նշանակալից է ժողովրդավարության համար: Շնորհավորում եմ ընտրված քաղաքապետերին, կուսակցություններին եւ մեծամասնական պատգամավորներին, նրանց մաղթում հաջողություններ:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել տեղական եւ միջազգային դիտորդական առաքելություններին՝ ընտրությունների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության եւ որակյալ մոնիտորինգի համար: Հուսով եմ, որ ընտրությունների երկրորդ փուլն էլ կանցնի հանգիստ միջավայրում եւ ընտրողների ակտիվությունն էլ կլինի բարձր»,- ասված է Վրաստանի նախագահի շնորհավորական ուղերձում:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Հոկտեմբերի 23-ին, տեղական ինքնակառավարման ընտրությունների համար ձեւավորված միջգերատեսչական հանձնաժողովը, որը գլխավորում էր Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, անցկացրեց իր հետընտրական առաջին նիստը:

Ինչպես հայտարարեց հանձնաժողովի ղեկավարը, նիստում քննարկելու են քաղաքական կուսակցությունների կողմից, ընտրությունների օրը, ընտրողների բջջային հեռախոսներով առաքված հաղորդագրությունների հարցը: Թեա Ծուլուկիանու խոսքով, նման ուղերձ է հղել «Նոր Վրաստանի» կողմից Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Գիորգի Վաշաձեն: Ինչպես նշեց Թեա Ծուլուկիանին, դա ընտրական օրենսգրքի կոպիտ խախտում է, քանի որ ընտրությունների օրը ցանկացած քարոզարշավ համարվում է օրինախախտում:

Նիստում ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները բողոք ներկայացրին այն կապակցությամբ, որ ընտրատեղամասերում գրանցողների կողքին գտնվում էին քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, ովքեր գրանցում էին ընտրողներին: Դա եւս, ըստ ոչ կառավարական կազմակերպությունների, հանդիսանում է անձնական տվյալների գաղտնիության խախտում: Ինչպես պարզաբանեց հանձնաժողովի նախագահը, առանձին տեղամասերում քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին տրվել էր սեղանին դրված ցուցակներին ծանոթանալու հնարավորություն: «Ամենայն հավանականությամբ, այդ հարցի կարգավորման համար կպահանջվի օրենսդրական որոշում»,- ընդգծեց Թեա Ծուլուկիանին:

ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԹԲԻԼԻՍԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ԱՊԱԳԱ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հոկտեմբերի 25-ին, Թբիլիսիի նորընտիր քաղաքապետ Կախի Կալաձեն, անցումային ներկայիս փուլում, հանդիպում ունեցավ միջազգային ֆինանսական կազմակերպությունների եւ Վրաստանի կենտրոնական իշխանության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկեց քաղաքում ծրագրված նախագծերը:

Այդ մասին նա հայտարարեց նույն օրը՝ Թբիլիսիի սակրեբուլոյի «Վրացական երազանքից» ընտրված պատգամավորների հետ հանդիպմանը: Ինչպես նշեց նորընտիր քաղաքապետը, ինքը մտադիր է հանդիպումներ ունենալ նաեւ երկրի նախարարությունների ղեկավարների հետ, նա սակրեբուլոյի ապագա պատգամավորներին կոչ արեց սերտ կապեր պահպանել բնակչության հետ եւ ժամանակին կարգավորել քաղաքի առջեւ ծառացած հիմնախնդիրները: Ապագա քաղաքապետը հավաստիացրեց նաեւ, որ առաջիկայում մտադիր է սերտորեն համագործակցել սակրեբուլոյի հետ եւ գործել թիմային սկզբունքով:

ԴԱՏԱՐԱՆԸ ԹԻԱՆԵԹԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՃԱՆԱՉԵՑ ԹԱՄԱԶ ՄԵՃԻԱՈՒՐՈՒՆ

«Միասնական Վրաստանի համար» ընդդիմադիր կուսակցության լիդեր Թամազ Մեճիաուրին Մցխեթայի շրջանային դատարանում ապացուցեց, որ հենց ինքն է հաղթել Թիանեթիի քաղաքապետի ընտրություններում:

Թիանեթիի քաղաքապետի պաշտոնի համար Թամազ Մեճիաուրու գլխավոր մրցակիցը կառավարող «Վրացական երազանք» կուսակցության ներկայացուցիչ Լելա Քիտեսաշվիլին էր: Նրանց միջեւ ձայների տարբերությունն աննշան էր: Թիանեթիի բոլոր ընտրատեղամասերի արդյունքների ամփոփումից հետո, Վրաստանի ԿԸՀ, մեկ ձայնի տարբերությամբ, հաղթանակը շնորհեց Մեճիաուրուն: Նա հավաքեց ձայների 50,01 տոկոսը, իսկ Քիտեսաշվիլին՝ 49.99 տոկոսը:

Ավելի ուշ, ընտրական հանձնաժողովը որոշեց վերահաշվարկել ձայները: Մինչ այդ, անվավեր ճանաչված հինգ քվեաթերթիկները, որտեղ նշված էր կառավարող կուսակցության ներկայացուցչի անունը, որոշեցին ճանաչել իրական, որի արդյունքում էլ՝ Քիտեսաշվիլին 4 ձայնով մրցակցեց մրցակցին: Մեճիաուրին այդ որոշումը բողոքարկեց դատարանում եւ շահեց:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան բարեփոխումներին վերաբերող մի շարք հարցեր, անդրադարձան Հայաստանում սահմանադրական բարեփոխումներին հաջորդած գործընթացներին, դրանց արդյունքում արդեն իսկ ընդունված եւ ներկայում մշակման փուլում գտնվող իրավական ակտերին, ինչպես նաեւ քննարկեցին անչափահասների արդարադատության ոլորտի բարեփոխումներին վերաբերող մի շարք հարցեր:

Հանդիպման ավարտին՝ Հայաստանի արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանն այցելեց Հանրային ծառայությունների մատուցման կենտրոն, որտեղ, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, քաղաքացիներին մատուցվում են 150-ը գերազանցող պետական ծառայություններ:

Նշենք, որ առաջին հայ-վրացական իրավական ֆորումը տեղի էր ունեցել 2015թ. հունիսին, Երեւանում, որի ընթացքում քննարկվել էր իրավական եւ դատական հարցերի լայն շրջանակ:



ԱՄՆ

ՌԴ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕՐԵՆՔԸ ԿԻՐԱՐԿՎՈՒՄ Է

ԱՄՆ վարչակազմը սկսել է իրագործել Ռուսաստանի դեմ պատժամիջոցների մասին նոր օրենքը, որն ընդունվել է այս տարվա ամռանը, եւ Կոնգրես է ուղարկել պաշտպանության եւ հետախուզության հետ կապված անձանց ցուցակը:

Պետքարտուղար Թիլերսոնը թույլատրել է Պետդեպ-ին՝ պատրաստել հանձնարարականներ, որոնցում մատնանշվում են այն մարդիկ ու կազմակերպությունները, որոնք կա՛մ գործում են ի շահ ռուսական պաշտպանական սեկտորի, կա՛մ հետախուզության, կա՛մ կապված են նրանց հետ:

Անձանց ցուցակը պաշտոնապես հրապարակվելու է Պետդեպարտամենտի կայքում, բայց ստույգ ամսաթիվ չի նշվել:

ՈՒԿՐԱԻՆԱ

ՊԱՅԹՅՈՒՆԸ ՈՐԱԿՎԵԼ Է ՈՐՊԵՍ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Կիեւի «Էսպրեսսո» հեռուստաալիքի շենքի մոտ տեղի ունեցած պայթյունը որակվել է որպես ահաբեկչություն:

Պայթյունի հետեւանքով տուժել է հինգ մարդ, նրանցից մեկը՝ Գերագույն ռադայի պատգամավոր Իգոր Մոսիյչուկի թիկնապահը, մահացել է հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին: Մոսիյչուկն ինքը բեկորային բազմաթիվ վերքեր է ստացել, նրան վիրահատել են: Ծանր վիրավորված է նաեւ ուկրաինացի քաղաքագետ Վիտալի Բալան:

Պայթուցիկ սարքը, որն ամրացված է եղել կայանված մոտոցիկլետին, գործել է, երբ Մոսիյչուկը դուրս է եկել «Էսպրեսսո» հեռուստաալիքի գրասենյակից:

ԻՍՊԱՆԻԱ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՏԱԼՈՆԻԱՅՈՒՄ ԿԿԻՐԱՌՎԻ ՈՒԺ

Իսպանիայի կառավարությունը կարող է ուժ կիրառել Կատալոնիայում կարգի վերականգնման համար, եթե ինքնավարության անկախության կողմնակիցներն ընդդիմանան տարածաշրջանի իրադրության կարգավորմանն ուղղված միջոցառումներին: Այդ մասին հայտարարել է Իսպանիայի կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար, երկրի կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Ինյիգո Մենդես դե Վիգոն:

«Կառավարությունը չի կասեցնում ինքնավարությունը»,- ասել է դե Վիգոն: Նրա խոսքով՝ տեղի է ունենում «ինքնավարության վերականգնում»: «Նրանք, ովքեր ղեկավարում են Մոսսոս դ'Էսկվադրան, այժմ կփոխարինվեն ներքին գործերի նախարարությամբ»,- հավելել է նա:

ՉԻՆԱՍՏԱՆ

ՍԻ ՑԶԻՆՊԻՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Չինաստանի կոմունիստական կուսակցության 19-րդ գումարման Կենտրոնական կոմիտեն, հոկտեմբերի 25-ին կայացած իր առաջին լիագումար նիստում, Սի Ցզինպինին վերընտրել է ՉԿԿ-ի Կենտկոմի գլխավոր քարտուղար: Սի Ցզինպինը նաեւ զբաղեցնում է պետության ղեկավարի՝ ՉԺՀ-ի նախագահի պաշտոնը: ՉԿԿ-ի Կենտկոմը Սի Ցզինպինին ընտրել է նաեւ ՉԿԿ-ի ԿԿ-ի Ռազմական խորհրդի նախագահ:

Համագումարը միաձայն հավանություն է տվել չինական յուրահատկությամբ նոր դարաշրջանի սոցիալիզմի վերաբերյալ Սի Ցզինպինի գաղափարները որպես կուսակցության ուղեցույց ճանաչելուն՝ մարքսիզմ-լենինիզմի, Մաո Ցզեդունի գաղափարներին, Դեն Սյաոպինի ուսմունքին, եռակի ներկայացուցչության եւ զարգացման գիտական հայեցակարգի կարեւոր գաղափարներին համահավասար:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը, օրենսդիր մարմնի նախագահ Իրակլի Կոբախիձեի գլխավորությամբ, պաշտոնական այցով գտնվում է Իսրայելում:

Այցի շրջանակներում Վրացի խորհրդարանականները հանդիպում են ունեցել Իսրայելի նախագահ Ռովեն Ռիվլինի, Քնեսեթի նախագահ Յուլի Իոլե էդելշտայնի, Քնեսեթի ընդդիմության լիդեր Իսահակ Հերցոգի, ինչպես նաեւ Իսրայելի Քնեսեթի Վրաստանի հետ բարեկամության խմբի անդամների հետ:

Այցի շրջանակներում կողմերը քննարկել են վրաց-իսրայելական երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր, նշել, որ այն զարգացման նոր դինամիկա է ստանում: Հանդիպումներում՝ առանձնակի ուշադրություն է հատկացվել միջխորհրդարանական կապերի զարգացման հեռանկարներին, ընդգծվել բարեկամության խորհրդարանական խմբի ակտիվ աշխատանքը եւ դրա նշանակությունը՝ վրացիսրայելական բարեկամության եւ համագործակցության զարգացման գործում:

Այցի շրջանակներում Իրակլի Կոբախիձեն, Վրաստանի խորհրդարանական պատվիրակության անդամների հետ, ծաղկեպսակ է դրել Իսրայելի անկախության համար զոհվածների հուշակոթողին:



ԳԻԳԻ ԾԵՐԵԹԵԼԻՆ՝ ԵԱՀԿ ԽԱ ՆԱԽԱԳԱՀ

«Եվրոպական Վրաստան» կուսակցության ղեկավարներից մեկը, նախկինում «Միասնական ազգային շարժում» կուսակցության անդամ Գիգի Ծերեթելին դարձել է ԵԱՀԿ խորհրդարանական ասամբլեայի նախագահ:

Ինչպես նշեց «Եվրոպական Վրաստանից» խորհրդարանի պատգամավոր Օթար Կախիձեն, անցյալ տարի ռուսական պատվիրակության ջանքերով Գիգի Ծերեթելին չկարողացավ զբաղեցնել այդ պաշտոնը:

ԱՊՕՐԻՆԻ ԱՆՏԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վերջին երկու ամսվա ընթացքում, Սամցխե-Ջավախեթիի երկրամասում հայտնաբերվել է ապօրինի անտառահատման 161 փաստ եւ տեխնիկական ռեգլամենտի խախտման համար պատասխանատվության է ենթարկվել 20 մարդ:

Ինչպես նշեցին Վրաստանի ՆԳ նախարարությունում, երկրամասի Բորժոմիի, Ադիգենիի, Նինոծմինդայի, Ախալքալաքիի եւ Ախալցիխեի մունիցիպալիտետներում առգրավվել է մեծ քանակությամբ ապօրինի հատված փայտանյութ: Ադիգենիում, Ախալցիխեում եւ Բորժոմիում հայտնաբերվել եւ փակվել են մի քանի ապօրինի սղոցարաններ:

Վերոնշյալ գործերով հետաքննությունը տարվում է Վրաստանի ՔՕ 303 հոդվածով:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(27 հոկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.530	2.595
ԵՎՐՈ	2.916	3.042
ՌՈՒԲԼԻ	0.041	0.048
ԴՐԱՄ	0.0040	0.0058

Հոկտեմբերի 20-ի համեմատ, դոլարի կուրսը ավելացել է 0,115 լարիով:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳԻՆ ՄԻԱՅՆ TBC-ՈՒՄ

TBC-ի ապահովագրությունը սպառողներին առաջարկում է ավտոապահովագրության D1 սպասարկում, որի ծեւավորման գլխավոր նպատակն է բոլորի համար ավտոմոբիլի ապահովագրությունը դարձնել մատչելի:

D1-ի գլխավոր առավելությունն այն է, որ սպառողը ավտոմեքենան նվազագույն գնով կարող է ապահովագրել ամենահրատապ ռիսկից՝ ավտովթարից: D1-ի սակագինը ֆիքսացված է լարիով, որը տարածվում է ավտոմեքենաների բոլոր մոդելների վրա:

Ո՞վ կարող է օգտվել D1-ից

Սպառողը, որը 25 տարեկանից մեծ է, ունի սկսած 2000 թվականից թողարկած ավտոմեքենա, որը չի օգտագործում կոմերցիոն նպատակների համար. եւ ավտոմեքենան վարել է առնվազն մեկ տարի:

Ո՞ր պատահարներն է մարում D1-ը

D1 ավտոապահովագրությունը փոխհատուցում է ավտոճանապարհային միջադեպերը եւ ավտոպատասխանատվության ապահովագրությունը, ինչը նախատեսում է ավտովթարի արդյունքում մյուս ավտոմեքենաների, գույքի կամ առողջապահության վնասի դեպքում ստացված կորստի փոխհատուցումը:

Ի՞նչ արժե D1-ը

Գոյություն ունի D1 ապահովագրության երկու տեսակ.

Ամսական 30 լարիով դուք գնում եք 5 հազար լարիանոց փոխհատուցման լիմիտ,

Ամսական 40 լարիով դուք գնում եք 10 հազար լարիանոց փոխհատուցման լիմիտ:

TBC ապահովագրության վիճակագրական տվյալների համաձայն, ավտոճանապարհային վթարների 77 տոկոսի դեպքում՝ հասցրած վնասի չափը չի գերազանցում 5 հազար լարին, իսկ 91 տոկոսի դեպքում՝ վնասի չափը չի գերազանցում 10 հազար լարին: Վերոնշյալ վիճակագրությունը, ընդհանուր առմամբ, նախատեսում է ինչպես ապահովագրված մեքենան, այնպես էլ՝ ուրիշի գույքի վնասման արդյունքում հասցրած վնասի չափը:

Ինչպե՞ս կարելի է ձեռք բերել D1-ը

D1-ը կարելի է ձեռք բերել դյուրությամբ, ֆեյսբուքի մեսինջերից, TBC-ի ապահովագրության Բի-բոտի օգնությամբ: Բի-բոտը Վրաստանում առաջին ապահովագրական Բոտն է: Այն ինտեգրված է ֆեյսբուքի մեսինջերում եւ այն ցանկացած սպառող կարող է գտնել սոցիալական ցանցում գրանցման դեպքում:

Բի-բոտի ստացման համար անհրաժեշտ է ներկայացնել միայն մի քանի անձնական տվյալներ: Ընտրեք ցանկալի ապահովագրական լիմիտը եւ վճարման պայմանները, որից հետո ապահովագրության պոլիսը անմիջականորեն կստանաք էլեկտրոնային փոստի միջոցով:

Ապահովագրության ձեւակերպումից հետո, մեկ անգամ պետք է այցելեք TBC բանկի կամ TBC ապահովագրության ցանկացած մասնաճյուղ, որտեղ կլուսանկարեն ձեր ավտոմեքենան եւ ապահովագրությունն էլ կակտիվացնեն:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԵՐԲԵՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի առաջին փոխվարչապետ, ֆինանսների փոխնախարար Դմիտրի Քումսիշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանի ներբերող ընկերությունների ներկայացուցիչների հետ:

«Բիլտմոր» հյուրանոցում կայացած հանդիպմանը նաեւ ներկա էին ֆինանսների առաջին փոխնախարար, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին. ծառայության պետի տեղակալ Վախտանգ Լաշքարաձեն: Առաջին փոխվարչապետ Դմիտրի Քումսիշվիլին հանդիպման մասնակիցներին ներկայացրեց Վրաստանի տնտեսական վիճակը եւ ընթացիկ ու ծրագրված բարեփոխումները: Նրա խոսքով, 2017 թվականի ութ ամսվա միջին իրատեսական աճը կազմել է 4,7 տոկոս՝ ծրագրված 4 տոկոսի դիմաց, ինչը հնարավոր է դարձել հաջողությամբ իրականացված տնտեսական եւ դրամական բարեփոխումների շնորհիվ, որոնք իրականացվել կամ ընթացքի մեջ են կառավարության չորս կետից կազմված գործողության ծրագրին համապատասխան: Դմիտրի Քումսիշվիլիի հայտարարությամբ, զարգացման բարձր տեմպերի ապահովման համար, կառավարությունը մշակել է չորս կետից կազմված ծրագիր, որը հանդիսանում է Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համաձայնեցված ծրագրի հիմքը: Առաջին փոխվարչապետը դրական գնահատեց այն փաստը, որ Արժույթի միջազգային հիմնադրամը Վրաստանի տնտեսական իրատեսական աճի կանխագծումը 3,5 տոկոսից հասցրեց 4,2 տոկոսի: Դմիտրի Քումսիշվիլին ուշադրություն բեւեռեց նաեւ օրենսդրական փոփոխությունների վրա, այդ թվում՝ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների վրա, որոնց շնորհիվ նշանակալի ազատականացում իրականացվեց: Ինչպես նշեց առաջին փոխվարչապետը, երկրում տնտեսական աճի զարգացման եւ բիզնեսի աջակցության համար, նշանակալից է ներդրումներին կողմնորոշված գործարարության խրախուսումը, որպեսզի այն կարողանա իրականացնել բիզնեսում գումարների վերաներդնումը եւ ստեղծել նոր աշխատատեղեր:

Հանդիպմանը ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ներկայացուցիչը, ներբերող ընկերություններին ծանոթացրեց այն որոշմանը, որը դյուրացնում է ներբերողների համար ավելցուկի վերադարձման գործընթացը, նաեւ՝ խոսեցին ծրագրված նորամուծությունների մասին, այդ թվում՝ արտադրական եւ բնական կորուստների կարգավորման մասին: Ներբերողների համար առանձնակի նշանակալից էր իրենց ավելցուկի վերադարձման ընթացակարգի դյուրացման մասին իրականացված փոփոխությունը: Մասնավորապես, ներբերողներին, խրախուսման նպատակով, ավելացվել է պահանջարկի գնահատման չափորոշիչում շնորհվող առավելագույն միավորը: 2017 թվականի հունվարից մինչ օրս, ավտոմատ կերպով, 59 հարկատուներին վերադարձվել է 7133,50 հազար լարի, այդ թվում՝ 10 ներբերողների վերադարձվել է 3777,20 հազար լարիի չափով ներբերման գործարքներով ծագած ավելցուկը, իսկ վերոնշյալ փոփոխություններից հետո (2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչ օրս) վեց ներբերողների, ավտոմատ կերպով, վերադարձվել է 1628,00 հազար լարիի չափով ավելացած հարկի գումարը: 2017 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ, մոտավորապես 500 ներբերողի համար ծրագրվում է 55 միլիոն լարիի ավելորդ հարկի վերադարձում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻՆՆ» Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը վստահվել է «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության թեկնածու, Վրաստանի էներգետիկայի նախկին նախարար, նախկին փոխվարչապետ Կախա Կալաձեին: Թբիլիսիում գրանցված 943 423 ընտրողներից ընտրություններին մասնակից 410 հազարից (43,4 տոկոս)՝ նրա օգտին քվեարկել է ավելի քան 203 հազար ընտրող (51,1 տոկոս): Հատկանշական է, որ քվեների ստացած քանակությամբ երկրորդ տեղում անկախ թեկնածու Ալեքսանդր Էլիսաշվիլին է, որին պաշտպանել է ընտրողների 17,48 տոկոսը եւ միայն երրորդը «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչ Զաալ Ուդումաշվիլին (16,57 տոկոս):

Ինչ վերաբերում է Թբիլիսիի սակրեբուլոյի պատգամավորների ընտրությանը, ապա, այստեղ համամասնական կարգով կառավարող կուսակցությունը ստացավ ընտրողների ձայների 53,06 տոկոսը, դրանով իսկ ապահովեց սակրեբուլոյում իր մեծամասնական ներկայացուցչությունը: Բացի «Վրացական երազանքից», Թբիլիսիի սակրեբուլոյում իրենց ներկայացուցիչները կունենան նաեւ «Միասնական ազգային շարժումը», որը ստացել է ընտրողների 17,66 տոկոսի աջակցությանը, «Եվրոպական Վրաստանը» (9,18 տոկոս) եւ «Հայրենասերների ալյանսը» (5,62 տոկոս): Ընտրական մյուս սուբյեկտներից եւ ոչ մեկը չի հաղթահարել 4 տոկոս արգելագիծը:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ, համամասնական ընտրակարգով, երկրի ողջ մասշտաբով «Վրացական երազանք» կառավարող կուսակցությունը հասավ համոզիչ հաղթանակի: Նրա օգտին քվեարկել է ընտրություններին մասնակիցների 55,74 տոկոսը: Երկրորդ տեղում «Միասնական ազգային շարժումն» է (17,08 տոկոս), երրորդը՝ «Եվրոպական Վրաստանը» (10,4 տոկոս), չորրորդը՝ «Հայրենասերների ալյանսը» (6,56 տոկոս), հինգերորդը՝ «Լեյբորիստական կուսակցությունը»:

Ինչ վերաբերում է Թբիլիսիի սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով ընտրությանը, ապա, մայրաքաղաքի 10 ընտրատարածքներից վեցում հաղթել են կառավարող կուսակցության թեկնածուները (հաղթողների թվում է նաեւ Իսանիից ներկայացված թեկնածու Իլիա Չիշկարիանին), իսկ մնացած չորսում, Գլդանիի, Նաձալադեւիի, Սամգորիի եւ Սաբուրթալոյի ընտրատարածքներում, անց է կացվելու ընտրությունների երկրորդ փուլ: Ընդ որում, բոլոր չորս ընտրատարածքներում կառավարող կուսակցության թեկնածուների մրցակիցը «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչներն են:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Միանգամից նշենք, որ, հոկտեմբերի 21-ի տեղական ընտրություններին, բնակչության մասնակցության ցուցանիշով՝ 55 տոկոսով (գրանցված 145 321-ից ընտրություններին մասնակցել է 79 912-ը) Սամցխե-Ջավախեթիի երկրամասը երկրի ողջ մասշտաբով զիջում է միայն Ռաճա-Լեչխումիին (60,2 տոկոս) եւ Գուրիային (58,5 տոկոս):

Ինչ վերաբերում է Ախալքալաքիում անցկացված ընտրություններին, նշենք, որ ընտրություններին մասնակցել է ընտրողների 52 տոկոսը: Արժանանալով ընտրողների 58 տոկոսի աջակցությանը, Ախալքալաքիի քաղաքապետի պաշտոնի համար մրցապայքարում հաղթող է դարձել «Վրացական երազանքի» թեկնածու Յուրիկ Ունանյանը: Նրա մրցակիցներից, «Վրաստանի հայրենասերների ալյանսի» թեկնածու, խորհրդարանի նախկին պատգամավոր Սամվել Պետրոսյանին պաշտպանել է ընտրողների 33 տոկոսը:

Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին, այստեղ էլ ընտրատեղամասերի մեծ մասում (22-ից՝ 16-ում) հաղթել են կառավարող կուսակցության ներկայացուցիչները, մեկական ընտրատարածքներում՝ «Հայրենասերների ալյանսի» թեկնածուն եւ անկախ թեկնածուն: Երկու ընտրատարածքներում «Վրացական երազանքի» թեկնածուների մրցակիցներն են «Ժողովրդավարական շարժում-Ազատ Վրաստանի» եւ «Հայրենասերների ալյանսի» թեկնածուները, եւս երեք ընտրատարածքներում՝ կմրցակցեն «Վրացական երազանքի» ներկայացուցիչներն ու անկախ թեկնածուները:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Հոկտեմբերի 21-ի տեղական ընտրություններին մասնակցել է Նինոծմինդայի ընտրողների 55 տոկոսը: Քաղաքապետի պաշտոնի համար առաջադրված չորս թեկնածուներից ձայների 75,35 տոկոսով այդ պաշտոնում ընտրվել է «Վրացական երազանքի» թեկնածու, վրաց լեզվի ուսուցչուհի, շրջանի ռեսուրսկենտրոնի նախկին ղեկավար եւ ապա՝ շրջանային սակրեբուլոյի պատգամավոր Անի Մոսոյանը:

Շրջանի մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական ընտրություններում ընտրական բոլոր տեղամասերում ճնշող մեծամասնությամբ հաղթել են «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության թեկնածուները:

ԱԽԱԼՑԻԽԵ

Ախալցիխեի քաղաքապետի պաշտոնի համար պայքարում, ընտրողների քվեների 69,24 տոկոսի աջակցությամբ, հաղթեց «Վրացական երազանքի» թեկնածու Զազա Մելիքիձեն:

Ինչ վերաբերում է մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորների մեծամասնական ընտրությանը, այս մրցապայքարում էլ բոլոր տեղամասերում հաղթող են ճանաչվել «Վրացական երազանքի» ներկայացուցիչները: Ընդ որում, այլոց թվում՝ Ախալցիխեի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորներ են ընտրվել Համբարձում Բաբայանը, Արտաշես Բալասանյանը, Պայծառ Մանասյանը, Հարություն Աղաբաբյանը, Պետրոս Վարդանյանն ու Մկրտիչ Գինոսյանը:

ԱՍՊԻՆՁԱ

Ասպինձայի քաղաքապետի ընտրություններում, ընտրողների 56,4 տոկոսի աջակցությամբ, հաղթեց «Վրացական երազանքի» թեկնածու Ռոստոմ Մագրաքվելիձեն:

Մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորների մեծամասնական ընտրություններին մեծ մասամբ հաղթել են կառավարող կուսակցության թեկնածուները, միայն երեք ընտրատեղամասերում կանցկացվի ընտրությունների երկրորդ փուլ, որտեղ «Վրացական երազանքի» թեկնածուներին հակադրվում են «Հայրենասերների ալյանսի» եւ «Եվրոպական Վրաստանի» ներկայացուցիչները: Նշենք, որ ընտրված մեծամասնական պատգամավորների թվում է էմին Բալոյանը:

ԲՈՐԺՈՄԻ

Հոկտեմբերի 21-ի տեղական ընտրությունները պարզություն չմտցրին Բորժոմիի քաղաքապետի ընտրության հարցում: «Հայրենասերների ալյանսի» ներկայացուցիչ Զազա Չաչանիձեն եւ «Վրացական երազանքի» թեկնածու Լեւան Լիպարտիան առաջին փուլում հավաքեցին ընտրողների, համապատասխանաբար, 40,15 եւ 40,35 տոկոսը: Մունիցիպալիտետի քաղաքապետի ընտրության համար այստեղ կանցկացվի երկրորդ փուլ:

Ինչ վերաբերում է մեծամասնական պատգամավորների ընտրությանը, ապա, այստեղ մանդատների ճնշող մեծամասնությունը բաժին է ընկել կառավարող կուսակցության ներկայացուցիչներին, որոնց թվում է նաեւ Արայիկ Անտոնյանը: Թեպետ սակրեբուլոյում կունենանք ազգությամբ հայ եւս մեկ պատգամավոր: Ընտրությունների երկրորդ փուլում ընտրատեղամասերից մեկում մանդատը վիճարկում են «Միասնական ազգային շարժման» թեկնածու Վիդիա Իրիցյանը եւ «Վրացական երազանքի» ներկայացուցիչ Անդրուշ Իրիցյանը: Եվս ազգությամբ մեկ հայ պատգամավոր:

ԾԱԼԿԱ

Հոկտեմբերի 21-ին անցկացված տեղական ինքնակառավարման ընտրություններին, Ծալկայի քաղաքապետի պաշտոնի համար պայքարում, հաղթող դարձավ Ծալկայի նախկին քաղաքապետ, «Վրացական երազանքի» թեկնածու Իլիա Սաբաձեն: Նրա օգտին քվեարկել է ընտրողների 66,52 տոկոսը:

Մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորների մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մեծ մասամբ հաղթել են կառավարող կուսակցության ներկայացուցիչները: Հաղթողների թվում են նաեւ մեկ անկախ թեկնածուն ու «Հայրենասերների ալյանսի» ներկայացուցիչը: Առանձին ընտրատարածքներում կանցկացվի երկրորդ փուլ, որտեղ միմյանց կհակադրվեն կառավարող կուսակցության եւ «Միասնական ազգային շարժման», «Վրացական երազանքի», «Հայրենասերների դաշինքի» եւ «Եվրոպական Վրաստանի» թեկնածուներն ու ներկայացուցիչները: Մեծամասնական պատգամավորներից ընտրվածների թվում են Լեւոն Մարկոսյանը, Գոչա Խաչատրյանը, Արթուր Սարգսյանը, Լաերտ Թորոսյանը, Խաչատուր Մազմանյանը, Սերգեյ Գուլիկյանը, Հարություն Ավետյանը, Անթառամ Մելտոնյանը, Ռուբեն Հանեսյանը, Սարգիս Հովհաննիսյանը:

ԲՈԼՆԻՍԻ

Բոլնիսիի քաղաքապետի ընտրություններում, ընտրողների ձայների 85,59 տոկոսով, հաղթեղ «Վրացական երազանքի» թեկնածու Դավիթ Շերազադիշվիլին:

Մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորների մեծամասնական ընտրություններում հաղթել են «Վրացական երազանքի» ներկայացուցիչները: Հաղթողների թվում է նաեւ Լեւոն Մանուկյանը:

ՄԱՌՆԵՈՒԼԻ

Տեղական ինքնակառավարման ընտրություններում Մառնեուլիի քաղաքապետի պաշտոնի համար պայքարում՝ 69,9 տոկոսով հաղթեց կառավարող կուսակցության ներկայացուցիչ Թեմուր Աբազովը:

Մեծամասնական ընտրակարգով Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյում մանդատները լրիվությամբ բաժին են ընկել կառավարող կուսակցության թեկնածուներին, որոնց թվում են նաեւ Լեւոն Հակոբյանը, Արամ Կարապետյանը եւ Արսեն Հախվերդյանը:

ԹԵԹՐԻԾՂԱՐՈ

Թեթրիծղարոյի քաղաքապետի ընտրություններում՝ քվեների 65,23 տոկոսով հաղթեց «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստանի» թեկնածու Գիորգի Քորիձեն:

Մեծամասնական ընտրակարգով Թեթրիծղարոյի սակրեբուլոյի պատգամավորի մանդատին արժանացել են կառավարող կուսակցության թեկնածուները, որոնց թվում է նաեւ Սվետլանա Ջիրաշվիլի-Ադամյանը (գյուղ Դուռնուկ): Միայն երկու տեղամասերում կանցկացվի երկրորդ փուլ, որտեղ «Վրացական երազանքի» թեկնածուներին կհակադրվեն «Հայրենասերների ալյանսի» եւ «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչները: Նշենք, որ համամասնական ընտրակարգով սակրեբուլոյի պատգամավորի մանդատ է ստացել Սամշվիլդո գյուղից Անդրանիկ Սաղրադյանը:

ԴԵԴՈՓԼԻՍՏՂԱՐՈ

Դեդոփլիսծղարոյի քաղաքապետի ընտրություններում, ընտրողների 65,45 տոկոսի աջակցությամբ, համոզիչ հաղթանակ է տարել «Վրացական երազանքի» թեկնածու Նիկոլոզ Ջանիաշվիլին:

Ընտրությունների արդյունքներով մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորի մանդատ է նվաճել «Վրացական երազանքի» ներկայացուցիչ, Սաբաթլո գյուղից Վասիլ Չովուշյանը:

ՍԱՄՏՐԵԴԻԱ

Սամտրեդիայի մունիցիպալիտետի պատգամավորների համամասնական ընտրակարգով ընտրություններում, այլոց թվում հաղթող է ճանաչվել «Վրացական երազանքից» առաջադրված թեկնածու Շալվա Արզումանյանը: Նշենք, որ նախորդ գումարման սակրեբուլոյում, նա ֆինանսա-բյուջետային հանձնաժողովի նախագահն էր:

Ավելացնենք, որ համամասնական ընտրակարգով վերոնշյալ սակրեբուլոներում ընտրված պատգամավորների ազգանունները կներկայացնենք ԿԸՀ-ի պաշտոնական հրապարակումից հետո:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ